

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/9

28 օգոստոսի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 27.07.2012թ-ի նիստում քննության է առնվել <Արթիկի կոմունալ տնտեսություն> ԲԲԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արթիկի ՏՀՏ 09.07.2012թ. թիվ 1002339 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 29.02.2012թ. թիվ 1002339 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Արթիկի կոմունալ տնտեսություն> ԲԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում 09.07.2012թ-ին կազմվել է թիվ 1002339 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 4.292.285 դրամ, ինչպես նաև պակասեցման 234.900 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

Ըստ ստուգմանը ներկայացված սկզբնական հաշվապահական փաստաթղթերի (ծախսերը և իրացումը հավաստող) և ՏՀՏ ներկայացված 2008, 2009, 2010թ.թ. շահութահարկի հաշվարկում արտացոլված համախառն եկամտից կատարված նվազեցումների ու համախառն եկամտի համադրումից պարզվեց, որ համախառն եկամտից կատարված նվազեցումներն ավել են ցույց տրվել 2008թ-ին 4291500 դրամ, 2009թ. 576000 դրամի չափով, պակաս են ցույց տրվել 2010թ-ին 5673200 դրամ, իսկ համախառն եկամուտը պակաս է ցույց տրվել 2009թ. 1300100 դրամի չափով, իսկ 2010թ-ին 5840000 դրամի չափով, որի հետևանքով տարեկան հարկվող շահույթը պակաս է հաշվարկվել 2008թ.-ին 4291500 դրամով, 2009թ-ին 1876100 դրամով, 2010թ-ին 167400 դրամի չափով: Խախտվել է <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջը, ըստ որի, հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով: Խախտվել է նաև <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջները:

Պակաս ցույց տրված հարկվող շահույթից համաձայն <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի հաշվարկվում է շահութահարկ 20% դրույքաչափով՝ գումարով 2008թ. 858300 դրամ, 2009թ. 375220 դրամ և 2010թ. 33480 դրամ:

Ընկերությունը համաձայն <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 47-1 հոդվածի հաշվարկված 2008, 2009 և 2010թ.թ. շահութահարկի նվազագույն գումարները վճարել է սահմանված ժամկետից ուշ:

Հիմք ընդունելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածի դրույթները շահութահարկի գծով ենթակա է բյուջե լրացուցիչ վճարման ընդամենը 2960628 դրամ:

Ստուգման ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

1. Ընկերության կողմից ստուգմանը ներկայացված իրացումը հավաստող սկզբնական հաշվապահական փաստաթղթերի և ՏՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներում արտացոլված ԱԱՀ-ով հարկվող շրջանառության համադրումից պարզվեց, որ վերջինս պակաս է ցույց տրվել 2009թ. 2-րդ եռամսյակում 1113400 դրամ, 4-րդ եռամսյակում 286700 դրամ ընդամենը 1400100 դրամ, որից համաձայն <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի հաշվարկվում է 280020 դրամ ԱԱՀ:

2. Ընկերության կողմից ՏՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում արտացոլված հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների և ստուգմանը ներկայացված մատակարարներից ստացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների համադրումից պարզվեց, որ կազմակերպությունը խախտելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները 2008թ. 12-րդ ամսվա ԱԱՀ-ի հաշվարկում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը ավել է ցույց տվել 194300 դրամի չափով, որի հետևանքով այդ հաշվետու ժամանակաշրջանների ԱԱՀ-ի հաշվարկում բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը պակաս է ցույց տրվել 194300 դրամի չափով:

3. Ըստ ընկերության կողմից ստուգմանը ներկայացրած իրացումը հավաստող սկզբնական հաշվապահական փաստաթղթերի, 2010թ-ի իրացումից հասույթը կազմում է 17893200 դրամ, սակայն ՏՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով /Ներառյալ ԱԱՀ/ այն կազմել է 12052560 դրամ:

Ըստ ընկերության կողմից ներկայացված սկզբնական փաստաթղթերի ստուգումից պարզվեց, որ ընկերությունը 2010թ-ի ընթացքում չի բավարարել «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ պարբերության ա)-ից գ) ենթակետերի դրույթներին, ինչպես նաև նույն հոդվածի համաձայն իր հաշվառման վայրի հարկային մարմին չի ներկայացրել գրավոր հայտարարություն ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ, հետևաբար ընկերությունը վերը նշված ժամանակահատվածում հանդիսանում է ԱԱՀ վճարող չհամարվող: 2010թ-ին ընկերության կողմից դուրս են գրվել հարկային հաշիվներ՝ (կատարողական ակտեր առանձնացված 20% ԱԱՀ-ի դրույքաչափով) 2-րդ եռամսյակում 1875000 դրամ, 3-րդ եռամսյակում 1875000 դրամ, 4-րդ եռամսյակում 2169900 դրամ, ընդամենը 5919900 դրամ /առանց ԱԱՀ/:

Ըստ ընկերության կողմից ՏՀՏ ներկայացված 2010թ-ի ԱԱՀ հաշվարկների՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կազմել է 1-ին եռամսյակում 466100 դրամ, հաշվանցման ենթակա 42200 դրամ, 2-րդ եռամսյակում 2034000 դրամ հաշվանցման ենթակա 136700 դրամ, 3-րդ եռամսյակում 4211100 դրամ հաշվանցման ենթակա 283300 դրամ, 4-րդ եռամսյակում 3337600 դրամ հաշվանցման ենթակա 252800 դրամ:

Ընկերությունը խախտելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, որի համաձայն մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցման ենթակա չեն ԱԱՀ վճարող չհամարվող անձանց կողմից, ՏՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներում կատարել է ԱԱՀ-ի հաշվանցում 2010թ-ի 1-ին եռամսյակում 42200 դրամ, 2-րդ եռամսյակում 136700 դրամ, 3-րդ եռամսյակում 283300 դրամ, 4-րդ եռամսյակում 252800 դրամ: Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի, նույն օրենքի 19-րդ հոդվածի պահանջները խախտելու և հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում անձինք պարտավոր են հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարները սահմանված կարգով վճարել բյուջե:

Վերը շարադրվածի արդյունքում ընկերությունը 2010թ-ին ավել ԱԱՀ է հաշվարկել 1-ին եռամսյակում 51000 դրամ, 3-րդ եռամսյակում 183900 դրամ, ընդամենը 234900 դրամ և պակաս ԱԱՀ է հաշվարկել 2-րդ եռամսյակում 104900 դրամ, 4-րդ եռամսյակում 19280 դրամ, ընդամենը 124180 դրամ:

Ընկերությունը խախտելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջները ՏՀՏ ներկայացրած տեղեկանքներում որպես մատակարար չի ներկայացրել թվով 11 հարկային հաշիվների /այդ հարկային հաշիվում նշված իրացման շրջանառությունը ներառվել է համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկներում/ վերաբերյալ տեղեկություն:

Հիմք ընդունելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43, 43.1 հոդվածների, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23 և 25 հոդվածների դրույթները ԱԱՀ-ի գծով ենթակա է բյուջե լրացուցիչ վճարման ընդամենը 1271657 դրամ և պակասեցման՝ 234900 դրամ:

<Արթիկի կոմունալ տնտեսություն> ԲԲԸ գանգատում մասնավորապես նշված է:

«Հ ԿԱ ՊԵԿ Արթիկի ՏՀՏ աշխատակիցների կողմից <Արթիկի կոմունալ տնտեսություն> ԲԲԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Ստուգումը կատարվել է քանի որ ընկերության ղեկավար աշխատակիցները (ստացիոնար բուժում) ներկա չեն եղել: Սակայն, 09.07.2012թ-ին կազմվել է ստուգման ակտ, որը չի համապատասխանում իրականությանը:

Ելնելով վերագրյալից ընկերությունը խնդրում է կատարել վերստուգում ընկերության իրավասու աշխատակիցների մասնակցությամբ:

Քննարկման ընթացքում ընկերության տնօրենը նշեց, որ ստուգման ամբողջ ընթացքում (12.03.2012թ-ից մինչև 27.06.2012թ.) հիվանդության պատճառով ընկերության հաշվապահի բացակայելու հետևանքով ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց հնարավոր չի եղել տրամադրել ստուգվող ժամանակաշրջանին վերաբերող ընկերության հաշվապահական հաշվառման ամբողջ փաստաթղթերը: Մասնավորապես, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց փաստաթղթերը ներկայացրել է ընկերության գանձապահը, որը քնականաբար չէր կարող տեղյակ լինել ընկերության բոլոր փաստաթղթերի գտնվելու վայրից: Հետևապես ընկերությունը խնդրում է հնարավորություն ընձեռել կրկին անգամ ուսումնասիրելու ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերը՝ պարտավորությունների իրական պատկերը պարզելու համար:

Հանձնաժողովի անդամների ընկերության տնօրենին ուղղված հարցին, թե կարող են արդյոք Հանձնաժողովին ներկայացվել բոլոր այն փաստաթղթերը, որոնք չեն ներկայացվել ստուգման ընթացքում, հնչեց պատասխան, որ տվյալ պահին դրանք չեն կարող ներկայացվել:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ այն բոլոր փաստաթղթերը, որոնք ներկայացվել են ստուգման ընթացքում, հիմք են ընդունվել ընկերության պարտավորությունները հաշվարկելիս:

«Հ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ստուգման ակտը կազմված է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն հրավիրվում է բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ